ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց»

ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- «Սովորողներ մեջ արժեքային համակարգի ձևավորումը ,առարկային դասավանդման ընթացքում»

Դպրոց-Գոմքի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ- Լուսինե Ստեփանյան

Ղեկավար- Օհանեսյան Կիմա

ՎԱՅՔ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
- Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում:
- «ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» առարկայի առանձնահատկությունները
- Հետազոտական ընթացք
- Փոխներգործության ռազմավարություններ:
- Եզրակացություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսկական ուսուցումը ոչ այնքան կանոնների

մեջ է,որքան վարժությունների:

Ժան-Ժակ Ռուսո

21-րդ դարի պայմաններում արդի խնդիր է կայուն արժեհամակարգով անհատի կայացման գործընթացը, քանի որ նոր տեխնոլոգիաները, ծրագրերը, նորարարությունները հետին պլան են մղել հոգևոր արժեքները: Այսօր՝ մանկավարժներիս գերնպատակն է դարձել ձևավորել սովորողների մոտ իրականությանը քննադատաբար վերաբերվելու կարողություն, արժեքային կողմնորոշումների կայուն համակարգ,ամուր դիրքորոշում որն ի վերջո կհանգեցնի հասարակության մեջ անձնային ինքնորոշման:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է, ՀՀ պետական հանրակրթական չափորոշչում, որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Արժեհամակարգի ձևավորման և վերջինիս հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում կրթության կարևոր և անփոխարինելի մաս է կազմում:

ԹԵՄԱՅԻՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս զգալի փոփոխություններ են տեղի ունեցել արժեքային ուղղվածության, կյանքի հեռանկարների, վերաբերմունքի, մարդկանց,

հատկապես դեռահասների և երիտասարդության կարիքների մեջ: Մարդու համար առաջադրվել են որակապես նոր պահանջներ ՝

նրա կյանքի ակտիվ դիրքի, իր սուբյեկտիվության, ինքնագիտակցության, ինքնորոշման և ստեղծագործական ինքնակարգավորման ընկալման և մոբիլիզացման համար: Ժամանակակից սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումները, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, մշակութային և սոցիալական արժեքների անհամապատասխանությունը և ժամանակակից այլ իրողություններ իրենց անմիջական ներգործությունն են թողնում ուսումնադաստիարակչական գործընթացի, հետևաբար նաև սովորողների արժեքային կողմնորոշումների համակարգի վրա:

Դրանով էլ պայմանավորվածէ մեր թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակը

Մարդուն ստեղծում է դաստիարակությունը:

Ա. Էքզյուպերի

Աշխատանքի նպատակն է բացահայտել երեխայի մեջ արժեքային համակարգի ձևավորումը անգլերենի առարկայի դասավանդման ժամանակ:

Աշխատանքի խնդիրներն են՝

● սահմանել արժեքի գաղափարը,

● ուսումնասիրել արժեքի զարգացման գործընթացը անգլերենի դասին:

Ինչպե՞ս երեխայի մեջ ձևավորել արժեքային համակարգը անգլերենի առարկայի դասավանդման ժամանակ:

Օտար լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

● Գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում, գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում,գեղագիտական ճաշակի ձևավորում,

● Բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

Հայ մանկավարժագիտության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել «ազգի դաստիարակություն», «ազգային դաստիարակություն» և «ազգայինի դաստիարակություն», հասկացությունները (Հ. Կարապետյան, 1999թ.):Առաջին հասկացությունը բովանդակում է համամարդկային որակների ձևավորումը ազգի մեջ:

Հայ մանկավարժագետ Հ. Մինասյանը իր աշխատության մեջ օգտագործում է «ազգային էակ» հասկացությունը, որով բնորոշում է շրջապատի մասին հոգացող, իր երջանկությունը ազգի երջանկության մեջ տեսնող անձնավորությանը:

Ազգային դաստիարակության մաին խոսելիս Գ. Նժդեհը գրում է. «Միայն մարդ կոչվելու արժանին կարող է արժանանալ հայ կոչվելուն:Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց և այնպես լավ հայ լինել»:

Իսկ ի՞նչ պետք է հասկանալ «ազգային դաստիարակություն» ասելով: Դա ենթադրում է ազգային սովորույթների, ավանդությունների,բնավորության գծերի և ընդհանրպես բոլոր դրական որակների անցումը մեկ սերնդից մյուսին, լինի դա կազմակերպված թե անվար:

Դպրոցական դաստիարակության կազմակերպման ողջ ժամանակաշրջանում այս իմաստով կարևորվում է «Վարդանանք» վեպում արտահայտված «Հայրենիքը դժվար բան է,ամեն մարդ չէ, որ կարող է հայրենիք ունենալ» միտքը:

Այլ է պատկերը երբ առկա է գեղագիտական դաստիարակություն: Գեղագիտական դատիարակությունը ձևավորում է անձնավորություն, որն ունի արվեստի յուրահատուկ լեզվով նրա ստեղծագործությունները կարդալու ընդունակություն:

Գեղարվեսական դաստիարակությունը կարևորում է նաև նրանով, որ

երաժշտության և գեղարվեստակն գրականության նկատմամաբ ձևավորված ճաշակն ու պահանջմունքները նպաստում են նաև ճշգրիտ գիտություններում խորացած գիտությունների նվաճումներին:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է ներկայացնել հետևյալ պատկերացումը. գեղագիտական կազմակերպված դաստիարակությունը դպրոցում աշակերտների այնպիսի գործնեության առաջացումն է ու կառավարումը, որի շնորհիվ նրանք շփվելու են գեղեցիկի դրսևորման զանազան ձևերի (բնություն, կենցաղ, վարք և այլն՝) ձեռք բերելով, այսպես կոչված էսթետիկական ընկալում,զգացմունք, պահանջմունք, ճաշակ, ընդունակություններ և գրագիտություն: Այդ ամենը անհրաժեշտ է արվեստի և իրականության էսթետիկական ընկալման և գեղագիտական գործունեության զանազան տեսակներին մասնակցելու համար: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն

ուսուցանվող օտար լեզուները, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում օտար լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական , հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Օտար լեզվի անհամրելի հարստությունները փոռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ:

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օտար լեզվի դասավանդումը ունի կրթադաստիարակչական և հաղորդակցական նպատակներ:Օտար լեզվի տարբերությունը այլ առարկաներից կայանում է նրանում, որ այն միջոց է այլ խնդիրներ լուծելու համար: Օտար լեզու դասավանդելիս ուսուցման ողջ պրոցեսը ուղղված է լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելուն, այսինքն գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման: Այսպիսով՝ օտար լեզվի դասավանդման առաջնային նպատակը ի տարբերություն մայրենի լեզվի հաղորդակցելն է , որի ուսուցումը տարվում է

ուսումնական ողջ պրոցեսում:

Օտար լեզվի յուրացումը օգնում է ժողովուրդների փոխըմբռնմանը, նպաստում երկրների միջև բարեկամական, գործարար և մշակութային կապերի հաստատմանը:

● Անգլերենը միջազգային հաղորդակցության լեզու է:

● Այն պաշտոնական լեզու է 53 երկրներում և մոլորակի վրա անգլերենով խոսում է 1.5 միլիարդ մարդ: Հետևաբար, շատ հավանական է, որ եթե

հանդիպեք որևէ մեկին այլ երկրից, երկուսդ էլ կկարողանաք խոսել անգլերեն: Այն ձեզ բաց դուռ է տալիս դեպի աշխարհ:

● Անգլերենը հեշտացնում է ճանապարհորդելը:

● Իսկապես, օդանավակայանի հայտարարությունները, գնացքների չվացուցակները, արտակարգ իրավիճակների մասին տեղեկությունները և փողոցների նշանները հաճախ հասանելի են անգլերենով, իսկ եթե ճանապարհորդում եք մի երկրով, որտեղ չգիտեք իրենց մայրենի լեզուն, միշտ երաշխավորված է գտնել մեկին, ով տիրապետում է անգլերենին:

● Անգլերենը կարող է ձեզ ավելի «խելացի» դարձնել: Հանրակրթական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցման նպատակն է . զարգացնել սովորողների լեզվական կարողությունները, 21-րդ դարի այս նորարարական տեխնոլոգիաների զարգացման ժամանակահատվածում ուր անգլերեն լեզուն առավել արդիական է ու պահանջված, երեխաների համար դարձնել ավեի պարզ և հասկանալի , ինչի շնորհիվ ավելի հասանելի կդառնա համաշխարհային գրականությունը,թույլ կտա աշխարհին ներկայացնել հայոց պատմությունը,կօգնի ձայն բարձրացնել և աշխարհի հանրությանը ներկայացնել սեփական երկրի նկատմամբ կատարվող ոտնձգությունները և անարդարությունները: Ինչը և կնպաստի աշխարհաճանաչման, աշխարհընկալման գործընթացին և արժեհամակարգի ձևավորմանը:

1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

2. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

3. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

4. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը ,

5. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ ,

6. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը ,

7. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք ,

8. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

9. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

10. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը;

11. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

12. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի հանրակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Պարզելու համար, թե որ արժեքներն են ձևավորվում աշակերտների մոտ ուսումնառության ընթացքում հարկ է կատարել հետազոտություն: Հետազոտության ընթացքում հարցմանը մասնակցել են տարրական, միջին և ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ: Կարևոր է նշել նաև, որ հետազոտությունը կատարվել է գյուղական համայնքում սովորողների շրջանում: Հարցին, թե ո՞ր արժեքներն են ձևավորվել ձեր մեջ դպրոցում, տարրական դպրոցի աշակերտների պատասխանը հետևյալն էր.

«Զինվորը, հայրենիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը ,հարգանքը, օգնել ընկերոջը, աշխատասիրությունը, կամեցողությունը, վստահությունը, ծնողասիրությունը»: Միջին դպրոցի սովորողները նշել են հետևյալ արժեքները. «Ընտանիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հարգանքը, ազատությունը՝ սեփական մտքերն ու գաղափարներն արտահայտելու, աշխատասիրությունը, մշակութային և հոգևոր արժեքները գնահատելը, վստահությունը, սերը, անկեղծությունը, հավատարմությունը, ընկերություն»:

Ավագ դպրոցի սովորողները ներկայացրել են հետևյալ արժեքները. «Հայրենասիրությունը, վստահությունը, անկեղծությունը, կյանքը, սերը, հարգանքը, կամքը, հետաքրքրությունը, հավատարմությունը, կրթվելը, խելքը, բարությունը, միմյանց գնահատելը, հավատը առ Աստված, արժանապատվությունը, ճշտախոսությունը, կամեցողությունը, խոհեմությունը, առատաձեռնությունը, նվիրվածությունը, աշխատասիրությունը, մշակութային արժեքները գնահատելը, ազատությունը, ընկերությունը, ինքնուրույնությունը, մարդ լինելը»: Այսպիսով, հետազոտական աշխատանք կատարելուց հետո կարող ենք ասել, որ բոլոր տարիքային խմբերում էլ ձևավորվում է այնպիսի արժեքային համակարգ, որը մեզ՝ ուսուցիչներիս լավատեսությամբ է ներշնչում: Մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք

չկորցնեն այն: Օտար մշակույթը ուսումնասիրելով ձևավորում են հարգանք օտար մշակույթի ինչպես նաև սեփական մշակույթի նկատմամբ: Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցումն այստեղ ինտեգրվող համակարգ է: Այսպես, օրինակ, օտար լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ:

Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսերդպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ

համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից: Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը: Ստեղծվում է բարձրամշակույթ լեզվական միջավայր: Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման միջոցներն են, որոնք փոխկապակցված են ուսուցչի և սովորողների գործունեությամբ: Մեթոդը հանդիսանում է կապող օղակ նախատեսված նպատակների և վերջնական արդյունքների միջև: Մեթոդներ ասելով պետք է հասկանալ ուսուցչի և սովորողների փոխհամաձայնեցված գործունեության միջոցները ուսուցման գործընթացում, որոնք ուղղված են սահմանված նպատակներին հասնելուն: Մեթոդների հիմնական բաղադրիչները հանդիսանում են եղանակները: Եղանակ ասելով հասկանում ենք գործունեություն առարկայի հետ, ինչպես նևաբանավոր և գրավոր գործունեություն: Եթե սովորողները կատարում են իրենց առջև դրված խնդիրը, ապա կարելիէ համարել, որ նրանք տիրապետում են ուսումնական աշխատանքի եղանակներին: Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու

ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները,չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող: Օտար լեզվի ուսուցիչը պետք է կարողանա դասի ընթացքում՝

ապահովել երկխոսության իրավիճակ (քննարկվող նյութի մատչելիություն, հետաքրքրություն, բարյացկամ, հանդուրժող, փոխհամաձայնության, փոխօգնության մթնոլորտ).

✔ ապահովել կոլեկտիվ գործունեություն (անհատական, զույգերով, խմբերով).

✔ խթանել սովորողի հետաքրքրվածությունը իր գործունեության արդյունքով.

✔ ապահովել անձնային կողմնորոշմամբ շփումներ (հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները,անձնական ,հոգեբանական ռանձնահատկությունները).

✔սահմանել յուրացվող նյութի խելամիտ ծավալ (ըստ սովորողների տարիքային խմբի և պատրաստվածության):

Սովորողները լեզվի տիրապետման և օգտագործման դասերին տարբերում են բանավոր խոսք կառուցելու, կարդալու, գրելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու իրենց ունակություններով, ուստի պետք է ուսուցման գործընթացում կիրառել երեխայակենտրոն մոտեցում այսօր շատ արդյունավետ է համագործակցելով ուսուցանելը: Այս մոտեցման հիմնական գաղափարը սովորողների հետ համատեղ որևէ առաջադրանք իրականացնելու համար հարմար պայմաններ ապահովելն է, ինչը ամրապտնդում է լեզվի տիրապետումը և դրա կիրառումը գործնականում: Համագործակցության ողջ գործընթացում պետք է կարևորվեն սովորողի ինքնուրույն ճանաչողական հետաքրքրությունները:

Փոխներգործության ռազմավարություններ

Լեզվական փոխներգործությունը ներառում է թե՛ ընկալման ու վերարտադրման, թե՛ համատեղ կապակցված խոսք կառուցելու համար անհրաժեշտ առանձնահատուկ 13 գործողությունները, ուստի ընկալման ու վերարտադրման վերոհիշյալ բոլոր ռազմավարոըթյուններն առնչվում են նաև փոխներգործությանը: Բնավոր փոխներգործությունը կամ երկխոսությունը սովորաբար տեղի է ունենում իրական ժամանակի մեջ և ենթադրում է զրուցակիցների կողմից իմաստի համատեղ ստեղծում: Նրանք կառուցում են ընդհանուր իմաստային համատեքստ՝ սահմանելով, թե ինչն է արդեն հայտնի, թե որքանով մտերմիկ կարող է լինել զրույցը կամ սահմանելով ու պահելով փոխադարձաբար ընդունելի տարածություն:

Միջնորդող խոսքային գործունեություն

Միջնորդող խոսքային գործունեության ժամանակ խոսողն իր սեփական մտքերը չի արտահայում: Նա պարզապես միջնորդի դեր է ստանձնում զրուցակիցներ միջև որոնք իվիճակի չեն անմիջականորեն հասկանալ միմյանց, սրանք սովորաբար տարբեր լեզուներով խոսողներն են լինում:

Միջնորդող խոսքային գործունեությունը ներառում է թե՛ բանավոր, թե՛ գրավոր թարգմանությունը, ինչպես նաև նույն լեզվով տեքստերի ամփոփումն ու վերաձևակերպումը, երբ բնագիր տեքստի լեզուն հասկանալի չէ լսողի համար: Հաղորդակցական գործունեություն:

Որպեսզի սովորողը կարողանա հանդես գալ որպես խոսող, գրող, լսող կամ ընթերցող, նա պետք է ի վիճակի լինի վարժ կատարել մի շարք գործողություններ: Խոսելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Պլանավորել և կառուցել որոշակի հաղորդագրություն

2. Ձևակերպել որարշակի լեզվական ասույթ

3. Արտաբերել որոշակի լեզվական ասույթ

Գրելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Կարուցել և ձևակերպել որոշակի հաղորդագրություն

2. Գրել կամ մեքենագրել տեքստը:

Լսելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ընկալել խոսքը

2. Ճանաչել հաղորդագրությունը

3. Հասկանալ հաղորդագրությունը

Ընթերցելու համար սովորողը պետք է կարողանա

1. Ընկալել գրավոր տեքստը

2. Ճանաչել և ըմբռնել հաղորդագրությունը

3. Հասկանալ հաղորդագրությունը

4. Մեկնաբանել հաղորդագրությունը:

Տեքստերը գործունեության տեսակները

Խոսքային գործունեության արդյունքը տեքստն է, որն արտասանելու կամ գրելու պահից իսկ դառնում է որոշակի արդյունք, որը փոխանցվում է տարբեր միջոցներով և անկախ է իր ստեղծողից: Այնուհետև տեքստը խոսքի ընկալման գործընթացում հանդես է գալիս որպես ներմուծվող տեղեկատվություն: Խոսքային գործունեության բոլոր ձևերը՝ ստեղծումը, ընկալումը և միջնորդությունը տեղի են ունենում ժամանակի մեջ:Բանավոր խոսքի իրական ժամանակայի բնույթը դրսևորվում է ինչպես խոսելու, լսելու ժամանակ, այնպես էլ ինքնին դրանց փոխանցման ձևերի մեջ: Բառապաշարի իրազեկություն: Բառապաշարային տարրերն ընդգրկում են կայուն բառակապակցություններ, որոնք բաղկացած են մի քանի բառերից, որոնք սովորում և օգտագործում են

որպես մի ամբողջություն: Քերականական իրազեկություն: Քերականական իրազեկությունը կարելի է սահմանել որպես լեզվի քերականական պաշարների գիտելիք և նրանց օգտագործման կարողություն:Անհրաժեշտության դեպքում՝ բառիմաստը կամ քերականական նյութը բացատրելու նպատակով մայրենի լեզվի օգտագործումը չի արգելվում: Դպրոցն ավարտած յուրաքանչյուր աշակերտի համար նվազագույն մակարդակի ապահովումը պարտադիր է: Աշակերտները պետք է կարողանան ձեռք բերած խոսաքային կարողություններն ու հմտությունները, լեզվական և երկրագիտական գիտելիքները գործնականում կիրառել ինչպես անմիջական խոսելու ժամանակ, այնպես էլ միջնորդավորված՝ գրավոր կամ ձայնագրված տեքստի միջոցով:

Ստացում է, որ ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Եզրակացություն

Օտար լեզուն հանրակրթական մյուս առարկաների նման կոչված է իրագործել իր առաքելությունը՝ համամարդկային արժեքների փոխանցումը երիտասարդ սերնդին: Օտար լեզուն լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը և փոխհարստացմանը: Օտար լեզուների իմացությունը ընձեռում է նաև լայն հնարավորություններ օգտվելու տեղեկատվության անսպառ աղբյուրներից՝ համացանց, մասնագիտական գրականություն և այլն: Դպրոցականներին սովորեցնելով կարդալ, ունկնդրել, խոսել և գրել օտար լեզուներով, թարգմանել մի լեզվից մյուսը, մենք հարթում ենք նրանց ճանապարհը դեպի այլ ազգային մշակույթներ և դրանց միջոցով դեպի համաշխարհային մշակույթ: Հնարավորություն ենք ընձեռնում հաղորդակցվել այլ ազգերի հետ՝ միավորելու համար ջանքերը՝ հանուն երկրի վրա խաղաղության և կյանքի պահպանման: Մենք՝ օտար լեզուներ դասավանդողներս, քաջ գիտակցում ենք, որ «ժողովուրդը մեծ է, երբ կարդալ գիտե», իսկ երբ օտար լեզուներ գիտե, ապա նրա մեծությունը կրկնապատկվում և եռապատկվում է: Ուրեմն պետք է էլ ավելի մեծ եռանդով ներդնենք մեր ուժերն ու ջանքերը, մեր գիտելիքները օտար լեզուների ուսուցմանն ու տարածմանը՝ դնելով այդ ուսուցումը ամուր հիմքերի վրա՝ հասցնելով այն մեծ բարձունքների: Այդ առաքելությունը հայրենասիրության յուրահատուկ դրսևորում է: Հայրենասիրությունը ոչ միայն հայապահպանումն է հայեցի դաստիարակությունը, հայերենի խոր իմացությունն է ,այլ նաև օտար լեզուների դասավանդումը բարձունքի վրա դնելու ու այն նվիրյալ աշխատանքով պահպանելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս», Երևան, 1985թ., 389 էջ
2. Սերգեյ Մանուկյան,Ընդհանուր մանկավարժություն, Երևան, 2005, էջ 77-79
3. Վ. Ա. Սուխոմլինսկի ,Երևան «Լույս» 1986, էջ 317
4. Ի.Փարամուզյան ,Սովորողների արժեհամակրգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում